

նանքէն հինգ քրիստոնեայ պաշտպանեալ քա-
ղաքացիներ հպատակ են: Այս պարագա-
ները, ինչպէս եւ Նեստորականներուն նոյն
խակ դիմագծին յատկանշերը հաւանօրէն կար-
ծեցնել կու տան թէ «Նեստորականներուն
մէջ հին խաղի ժողովրդեան զլիաւոր տարր
մը կը ներկայանայ»³⁸³:

Կորդուացիները հաւանաբար լեզուով
ու բարբոյլ թաղիներու ազգակից ժողովուրդ
էին: Կը յիշուին Գղաց (Ձեբել-Ձուզիլի քով),
Ծաւդէից (Beth Zawdai, Zabdicena) եւ Արդ-
նարդին ժողովուրդներուն հետ իբր առան-
ձին քրիստոնեայ ժողովուրդ մը Հայերուն,
Վրացիներուն, Աղուաններուն եւ Լիւնաց
(Դաղխատան) հետ միասին³⁸⁴: Յառաջագոյն
ընդհանրապէս Կորդուքի մէջ Քուրդ անուան
ուրիշ ձեւ մը կը նշմարուէր, մինչեւ որ
Martin Hartmann³⁸⁵ այս հին կարծիքին դէմ
յաջողութեամբ ոգորեցաւ եւ ցուցուց թէ
Քուրդերը Կորդուացիներու (Karduhoi, Gor-
dyoi) հետ նոյն չեն, այլ Յոյներէն³⁸⁶ յիշուած
Kyrtoi ցեղին հետ: Վերջինս աւելի կը յի-
շեցնէ Gutii, նաեւ Kutii եւ Gutium³⁸⁷,
Ասորեստանի հիւսիսային եւ հիւսիս-արեւ-
մտեան կողմը³⁸⁸ դանուղ վաչկատուններու
բնակավայր երկրի մ'անունն՝ ուստի նոյն ա-

³⁸³ Lehmann-Haupt, Armenien, I, էջ 306-
տ. եւ Հատ. Բ., էջ 682:
³⁸⁴ «Ըստ այսմ պատճենի հրովարտակ եհա յաշ-
խարհն Հայոց, ի վրաց եւ յղուանից եւ ի Լիւնաց,
ի Ծօղէից եւ ի Կորդուաց, յԱղձնեաց եւ բազում այլ
տեղեաց հեռաւորաց, որոց ոչ էին օրէնք երթալ զայն
ճանապարհ յառաջ ժամանակաւ: Գունդ կազմէր ի
Հայոց մեծաց դազատ եւ զազատորդի, եւ յարբունի
տանէ զստանիկ մարդիկ. ըստ նմին օրինակի ի վրաց
եւ յղուանից եւ յաշխարհն Լիւնաց, եւ որ այլ եւս ի
կողմանց կողմանց հարաւայ, մեթ ի սահմանս Տաճ-
կաստանի եւ ի Հոռոմոց աշխարհն եւ ի Կորդուաց եւ
ի Գղացն եւ ի Ծօղէիցն եւ յԱրդնարդին, որք էին ա-
մենեքեան հաւատացեալք ի մի կաթողիկէ առաքելա-
կան եկեղեցի», Եղբէշ, Ա. (էջ 10), տ. եւ Բ. (էջ 39):
Այս կտորի ինչ ինչ անուններու աշխարհագրական
զիրքի մասին տ. Ստ. Կանայեանց, Անյայտ գաւառներ
(Վաղարշ. 1914), էջ 9-46, որ ի մէջ այլոց կ'ապա-
ցուցանէ թէ Արգիմարդին է Աղձնիքի Արգն գաւառը
կրկնանուն ձեւով, որ է հայ. Արգն եւ ասոր. Արգուն,
ինչպէս Վանատայ (անդ, էջ 17 յժբ.):
³⁸⁵ Bohtan (MVAG 1897), էջ 90 յժբ.: Այս
կարծիքին կը հետեւի նաեւ Nöldeke (Kardu und
Kurden: Festschrift f. Kiepert, էջ 78), իբր երբեմնի
կարծիքին հակառակ (Untersuchungen zur Kritik des
AT, էջ 148): Տես նաեւ Meyer, GA I, էջ 902:
³⁸⁶ Polyb. V, 52, 5; Liv. 37, 40, 9; 42, 58, 13;
Bellius առ Ստարբ., Ժա, 13, 3. Ժե, 3, 1:
³⁸⁷ matu Gu-ti-e ki (Rm. III, 103), տ. Streck,
Assurbanipal III, էջ 784, որ միաժամանակ մտադիւր
կ'ընէ թէ ասոնց ցեղակիցները «Թագուոր» տեղուր
կը կրեն, ինչպէս այսօրուան Քուրդերն իրենց զուրկը,
ցեղակաւոր ու զիւզակաւոր «մեկիք» (յառկապէս =
Թագուոր) կ'անուանեն (անդ, Հատ. Ա., էջ CCCLIX):
³⁸⁸ Հմմտ. § 9, ճեթ. 252:

սոր բնակիչներուն հետ: Վինքլէր³⁸⁹ այս
վաչկատուն ժողովրդեան մասին այսպէս
կ'արտայայտուի. «Ինչպէս Բաբելացւոյն եւ
Ասորեստանցւոյն համար Սատտին կամ Փոքր-
ասիացին թեթեւամտութեան ու փոփոխա-
մտութեան մարմնացումն է, այսպէս ալ Կու-
տէացի ըսելով կ'իմացուի ըմբոստ, աւա-
զակաբարոյ, ճիշդ այնպէս, ինչպէս այսօր
նոյն կողմերը Քուրդ անունով կը հասկը-
ցուի³⁹⁰»:

Լեման-Հաուպտ³⁹¹ հին Կորդուացիներ-
ու սերունդը կը վերագտնէ այսօրուան Վրա-
ցիներուն մէջ, որոնց բնիկ անունն, որ է
Kartu, Kartul³⁹² (լին վրական եւ փոքր-
ասիական ծանօթ վերջաւորութիւն մըն է),
ունի ահնաու նմանութիւն Կորդուքի հետ.
որովհետեւ Kardukh — նախատիպարը քսե-
նոփոնեան Karduh ձեւին — ուրիշ բան չէ,
բայց եթէ Kardu եզակիին յոգնակին՝ հայե-
րէնի վրայէն կերտուած: «Նոյն իսկ զլիաւոր
ասորեութիւնը նուազ ծանրակշիռ է քան որ
կ'երեւայ. վասն զի վրացերէն ք հնչումն ա-
ռանձնայատկութիւններ ունի, որոնք զայն
դ հնչումին կը մերձեցնեն»: Լեման-Հաուպտ
կը դիմէ նաեւ վրացիներու աւանդութեան,
«որ զիրենք հարաւէն զաղթեցնել կու տայ»
եւ ինչպէս կ'երեւայ, յարաբերաբար ուշ ժա-
մանակ, եւ առանձնապէս մասնանիշ կ'ընէ
«վիմափոր բնակարաններուն», որոնցմով
«լի էր երբեմնի Կորդուաց աշխարհն, որոնք
Վարձիէի շինուածքներուն հետ ամենամեծ
նմանութիւնն ունին — անկանոն շարքեր վի-
մափոր բնակարաններու իրարու վրայ բար-
ձրացած բազմաթիւ յարկերով: Վիմափոր
բնակարաններուն այս նախնական ձեւը Սալ-
զիներու բուն երկրին մէջ բոլորովին կը
պակախ, մինչ բնականաբար արեւմուտք,
Փոքր Հայքի մէջ, խաղի տէրութեան շրջե-
զրները դարձեալ երեւան կու գայ: Վրա-
ցիներու եւ Կորդուացիներու միջեւ եղած
առնչութեան հարցն եթէ որոշակի ալ կարելի
չէ հաստատել, դէթ աչքի առջեւ պէտք է որ
ժարդ ունենայ³⁹³»:

³⁸⁹ H. Winckler, Die Völker Vorderasiens, AO,
I, 1 (1903), էջ 27:
³⁹⁰ Ընդգծումը մեզմէ է:
³⁹¹ Armenien, I, էջ 104 յժբ., II, 2, էջ 679:
³⁹² J. Karst (Alarodiens), p. 99 s.), Kartuli
կամ Karthveli անունն ստուգարանօրէն կը նոյնացնէ
Karduniaš, Qalduni, Chaldi, Kordukh, Carduchi
ձեւերուն հետ:
³⁹³ Անդ, էջ 105: Karst (Alarodiens, էջ 66 յժ.)
վրացիները փոխզական ժողովուրդ մը կը համարէ,
դէթ անուանս սուած իբր ստուգարանական մեկնու-
թեան համաձայն:

§ 11. ԵՂՐԱՎԱՑՈՒԹԻՒՆ

Մինչեւ հիմայ ըստաճներէն կը հետեւի
թէ Քուրդերու Կորդուացիներու հետ շիո-
թութիւնը տապանալերան Կորդուք-աւան-
դութեան փոփոխման մէջ որոշ դեր խաղա-
ցած է, ինչպէս եւ Ուրարտացիներու-Ալա-
րուկեանց Արաքսի հովիտը մղումն իրենց հոն
ձգած Արարատ անունով Մասիս-աւանդու-
թեան ծագման օժանդակած:

Առաջիկայ ուսումնասիրութեամբ կը յու-
սամ ամբողջ իրողութիւնն իր հարցերովը
ներկայացուցած ըլլալ, այսինքն թէ Արարատ
նաեւ Ծն. Ը, 4 տեղիքին մէջ բեւեռազրբերու
Ուրարտուն է — անտարբեր թէ իբր լեռան
կամ երկրի անուն հասկնալու է, երկուքն ալ
նոյն բանին կը յանդին — եւ այն թէ հայկա-
կան Տաւրոս-Մասիսը կը յարաբերէ, ուր
կան Տաւրոս-Մասիսը կը յարաբերէ, ուր
զտանք Ուրարտացիներուն բնակավայրը
ն. Բ. ԺԳ. դարուն համար: Այս լեռնաշղթան
իր տապանալեռ համարած են քանի մ'աւան-
դութիւններ, նոյն իսկ Կորդուք-աւանդու-
թիւնն եւ բարեկական ջրհեղեղի զրոյցն. որով-
հետեւ զասականներուն Gordyene բացա-
ւորութեամբ Տաւրոս-Մասիսն ալ կը հասկը-
ցուէր եւ միայն յետագային է որ այս աշխար-
հակն զաղափարին անձկանալով տա-
պանալեռը դէպի հարաւ փոխադրուած է.
ասոր նպատած են նաեւ ինչ ինչ սխալ ստու-
գարանութիւններ:

Այս եզրակացութիւնը կ'արդարացնէ զմեզ
անտեղի համարելու տեղիքին Մովսէսի հե-
ղինակութեան մասին ունէ կասկած. աւելի
անտեղի է բնականաբար զայն բնագրէն ան-
շատել եւ կրտսերագոյն ժամանակի՝ այսպէս
կոչուած քահանայական բնագրին վերագրել:
Առաջիկայ գլուխը կը փակեմ Արեւելի հնա-
վաստակաւոր (աշխարհիկ, ոչ-կաթողիկէ)
մասնագէտի մը³⁹⁴ խօսքով. «Վերջերս մաս-
նաւորապէս կարծեցեալ լուսամիտ շրջա-
նակներու մէջ սովորութիւն դարձած է,
ամէն բան, ինչ որ Հին Կտակարանի իբր հնա-
գայն ժամանակի աւանդութիւններ կը յիշա-
դագուշանք մերթիւն³⁹⁵: Անձնապէս ինձմէ
բոլորովին հեռու է ունէ ջատագովական գոր-
ծունէութիւն եւ կ'ըսեմ այն, ինչ որ կրնամ

³⁹⁴ Arthur Ungnad, Die ältesten Völkerwande-
rungen Vorderasiens (Kulturfragen, Heft 1), Bres-
lau 1923, էջ 14:
³⁹⁵ Ընդգծումը մեզմէ է:

ըսել պարզապէս իբրեւ պատմագէտ մը, որ
ճշմարտութիւնը կը փնտսէ եւ թոյլ կու տայ
համարձակելու այս իրերու մասին դատաս-
տան կազմել, որ սկզբնական աղբիւրներուն
քննադատական եւ զուտ առարկայական
քննութեան վրայ հաստատուած է: Արդ կը
տեսնենք թէ Հին Կտակարանի աւանդութիւնը
հին Արեւելիին շատ աւելի լաւ տեղեակ է
քան որ ոմանք մտքէ կրնային անցնել³⁹⁵»:

(Շարունակելի):
Հ. Վ. ԻՆՎԼԻՉԵԱՆ
Հին ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՐԵՎԵՍՏԱՆԻ ԱՆՎՈՐՈՒՄԸ
ՓՈՔՐ-ՀԱՅԿ ԵՒ ԿՈՐԴՈՒՅՆԷ (ՍԵՐԱՍԻՍԸ)
ԳՐԵՑ Հ. Յ. ՏԱՇԵԱՆ
(Շարունակելի):

Մագնեսիայի քով (190ին Ն. Բ.) Ան-
տիոքոսի Մեծի չարաչար պարտուիլը Հոռո-
մայեցիներէն՝ վճռական արդիւնք ունեցաւ
Փոքուն Ասիոյ մանր թագաւորութեանց
փոխին վրայ: Նոյնը յօգուտ գործածած են
բախտին վրայ: Նոյնը յօգուտ գործածած են
նաեւ երկու հայ իշխաններ Արտաշէս եւ
Ջարեհ, որոնք Անտիոքոսի Մեծի իբր «զօ-
րավար»ներ կը կառավարէին երկու հայ աշ-
խարհներ: Ստրաբոն կ'ըսէ թէ «պատմու-
թեան կը սորվենք» թէ այս ժամանակի
թեան կը սորվենք» թէ այս ժամանակի
Հայաստանն այնչափ մեծ չէր, բայց ընդար-
ձակուեցաւ մանաւանդ աշխարհակալու-
թեամբ Անտիոքոսի այն երկու նախկին կու-
սակալաց, որոնք իրենց տիրոջ ակամայէն
(190ի պարտութենէ ետքը՝ Հոռոմայեցուց
կողմն ելլելով) թող կապեցին, մին՝ Մովսէս
(«Մովսէս»), «Ալիսինէ» (ձուրբ. «Ամիսինէ»)
եւ Ոտոմանդիս (ձուրբ. «Որմանդիս») եւ
չըջակայ գաւառաց վրայ, եւ միւրը՝ Արտա-
շատու աշխարհին վրայ: Բայց միւրեւն ջան-
քով արուարձանեաց աղղերէն հեղհեղ ա-
սին գաւառներ, ի Մարաց՝ Կասպը («Կաս-
պիանէ»), «Փաւնիտիս» եւ «Բատրոսպե-
զան». Վրացիներէն՝ Պարսարայ ստորոտն
կողղ երկիրն ու «Քորդինէ» (ուղղել. «Քա-
ղարձինէ» = Կողարձը, Կղարձը) եւ Գու-
զարը՝ Կուրի այն կողմը, Սաղիւքներէ եւ
Մոսիւնացիներէ՝ Կարին («Կարենիտիս») եւ
Գերջան («Գերբսենէ» ուղղել՝ «Գեր-
բսենէ»)՝ որոնք Փոքր Հայոց սահմանակից
են կամ նաեւ անոր մասը. Կատաւոնացիներէ՝
Եկեղեցացը («Ակիլիսինէ») եւ Անտիլաւրոսի

